ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ2 025ՓԱՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 0-Ի ԹԻՎ 111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԲԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի ավագանու անդամներ վերոհիշյալ որոշման նախագիծը Մեզ է ներկայացվել սույն թվականի հունվարի 14-ին,ըստ որոշմանը կից ներկայացված հիմնավորող փաստաթղթերի՝ համայնքի բյուջեի 2025թվականի հունվարի 1-ի դրությամբ տարեսկզբի մնացորդները կազմել են՝

Բյուջեի տարեսկզբի մնացորդները կազմել են՝

Ա/ Վարչական մասի ՝ 197648482.50 հազ.ՀՀ դրամ/մեկ հարյուր ինսունյոթ միլիոն վեց հարյուր քառասունութ միլիոն չորս հարյուր ութսուներկու դրամ հիսուն/ լումմա

Բ/Ֆոնդային մասի մնացորդը կազմել է՝-91126782.70 հազ.ՀՀդրամ/ինսուն մեկ միլիոն հարյուր քսանվեց հազար յոթ հարյուր ութսուներկու դրամ70լումմա/

Ըստ ներկայացված կից հիմնավորումներից առկա է միայն նախորդ տարվա պարտքերի վերաբերյալ տեղեկատվություն՝ընդամենը գումարով՝20664.0հազ.ՀՀդրամ/քսան միլիոն վեց հարյուր վաթսունչորս հազար ՀՀ դրամի վերաբերյալ:

Համաձայն ՀՀ ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի5-րդ կետի դրույթների՝

5) հաստատում է միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները, բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

Միաժամանակ ՀՀԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է՝

4. Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկությամբ: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի՝ սույն օրենքով սահմանված հավասարակշռությունը: Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են համայնքի բյուջեի մուտքերը կամ ավելացնում են ելքերը, համայնքի ավագանին քննարկում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ընդունում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով:

Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու ընթացակարգը սահմանվում է համայնքի ավագանու կանոնակարգով՝ սույն օրենքի համաձայն:

Հաստատված համայնքի բյուջեի եկամուտների կազմում չնախատեսված և այդ բյուջե մուտքագրված նվիրաբերված գումարները համայնքի ղեկավարն իրավասու է նույն տարում ծախսել՝ ըստ նվիրաբերողի կողմից որոշված ուղղությունների:

Ուսումնասիրելով Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգը՝ համայնքի բյուջեում կատարվող փոփոխությունների վերաբերյալ որևէ դրույթ ներառված չե:

Համայնքի բյուջեում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ համայնքի ավագանու 2022թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 68 Ա որոշմամբ հաստատված ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ,որևէ դրույթ նախատեսված չէ:

Համաձայն ՀՀ ՏԻՄ օրենքի 13-րդ հոդվածի՝

13) տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվետվողականությունը, հրապարակայնությունն ու թափանցիկությունը.

Փաստացի վերոհիշյալ որոշմաբ հիմնավորված է միայն տարեսկզբին առկա պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ գումարով 20664. 0հազ ՀՀ դրամի չափով՝ տարբերությունը գումարով 268111. 2 հազ. ՀՀ դրամի չափով /երկու հարյուր վաթսուն ութ միլիոն հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր ՀՀ դրամի չափով ծախսերի ուղղություններ արտացոլված չեն,հետևաբար չի ապահովվել համայնքպետարանի գործունեության թափանցիկությունը և կատարվող ծախսերի հիմնավորվածությունը:

Վերոհիշյալ որոշման 1-ին կետով սահմանված՝

Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 2-ի «Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 111-Ն որոշման հավելվածի 1-6 հատվածներում կատարել փոփոխություններ:

Թե ինչ փոփոխություններ են կատարվել անհայտ է՝ ընդ որում համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի մնացորդից 170000. 0հազ ՀՀ դրամը պետք է ուղղվեր համայնքի բյուջեի ֆոնդային մաս՝համաձայն ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ օրենքի 13-րդ հոդվածի5-րդ կետի համաձայն

5. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարն ուղղվում է՝

ա) նախորդ (եզրափակված) բյուջետային տարում վարչական մասից ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերի գծով՝ առկա պարտավորությունների կատարմանը.

բ) սույն մասի «ա» կետում նշված պարտավորությունները կատարելուց հետո առաջացած միջոցների մնացորդն ուղղվում է համայնքի բյուջեի ֆոնդային մաս՝ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված ծախսերի ֆինանսավորման համար:

Ելնելով վերը նշվածներից պահանջում ենք կոնկրետ տեղեկատվություն ներկայացնել վերահիշյալ որոշում ՀՀ գործող օրենսդրությամբ ընդունելու վերաբերյալ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔՊ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝ Ն.ՄԱԼԽԱՍՅԱՆ

20/I. 2025թ.